+374 41 30 13 99
www.eventexpo.group
e-logifest@eventexpo.group

ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

Տաղավարի ամրագրման պայմանները՝

- Ամրագրումն ուժի մեջ է 5 աշխատանքային օր:
- Հաստատումից հետո ռեկվիզիտների ուղարկումը ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:(Ռեկվիզիտ՝ Կազմակերպության անվանումը / ՍՊԸ/ՓԲԸ, Հարկային կոդը/ ՀՎՀՀ/, Իրավաբանական հասցե, ծանուցման հասցե, Տնօրենի անունը, Բանկ, Հաշվեհամար).
- Պայմանագրի կնքումը 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Սոցիալական ցանցերի մեր էջերում հրապարակումների համար անհրաժեշտ նյութերի տրամադրում՝ ընկերության լոգոտիպը (vector ֆայլ) հարցման պահից սկսած 3 աշխատանքայինօրվա ընթացքում:
- Պայմանագրի արժեքի 10%-ի (կանխավճար). փոխանցումը պայմանագրի կնքման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- Պայմանագրի արժեքի 40%-ի (վճարման 2-րդ փուլ) փոխանցումը կսահմանվի պայմանագրով՝ ելնելով ձեր կողմից միջոցառմանը միանալու ժամկետներից:
- Պայմանագրի արժեքի 50%-ի (վճարման 3-րդ փուլ) փոխանցումը կսահմանվի պայմանագրով՝ ելնելով ձեր կողմից միջոցառմանը միանալու ժամկետներից, սակայն ոչ ուշ քան միջոցառման անցկացման ժամկետին նախորդող 7 աշխատանքային օր առաջ:

Մարքեթինգ, մասնակցության ներկայանալիության արդյունավետությունը՝

- Կատարել համագործակցային գովազդվող առնվազն 3 հրապարակում սոցիալական ցանցերի ձեր պաշտոնական էջերում՝ e-Logi Fest26-ին ձեր ընկերության մասնակցության վերաբերյալ:
- Բոլոր մասնակիցներին հորդորում ենք միջոցառմանը ներկայանալ այդ օրերին գործող հատուկ առաջարկներով, ակցիաներով, խաղարկություններով: Սրա վերաբերյալ սոցցանցերում պիտի լինեն գովազդված հրապարակումներ, ինչը կնպաստի հենց դեպի ձեզ՝ ձեր տաղավար հաճախորդների մեծ հոսք:

- Միջոցառման 3 օրերին պարտադիր է ներկայանալ առավելագույն ակտիվությամբ, տաղավարը դատարկ չթողնել, լինել ինտերակտիվ, կատարել պլանավորված հանդիպումներ՝ նախապես ձեր ցանկալի, գործող և նոր հաճախորդներին, գործընկերներին հրավիրել ձեր տաղավար:
- Մասնակցության ներգրավե՛ք ձեր այն թիմակիցներին, որոնք առավելագույնս պատրաստված են ցուցահանդեսային ձևաչափում աշխատելուն, որոնք տիրապետում են ձեր պրոդուկտի/ծառայության բոլոր դետալներին, ունեն բարձր կոմունիկացիոն հմտություններ, սիրում են հաղորդակցվել, ներկայացնել ընկերությունը:

Տաղավարի արտաքին տեսքը՝

- Չկառուցապատված տաղավարի տրամադրումը մեր կողմից ենթադրում է պայմանագրով ֆիքսած քմ տարածք ցուցահանդեսային տարածքում, որտեղ ազատ եք իրականացնել ձեր տաղավարի կառուցապատումը՝ տվյալ տարածքի չափերին և հաջորդիվ անվտանգության նորմերի և կառուցապատման վերահսկողության իրականացման կարգին համապատասխան:
- Տաղավարի վերջնական տեսքը պետք է հաստատվի մեր կողմից, որից հետո միայն կարող եք ձեռնամուխ լինել տաղավարի պատրաստման աշխատանքներին, որպեսզի խուսափենք հետագա հնարավոր հատակագծային և անվտանգային խնդիրներից:
- Կառուցապատման համար կտրամադրվի միջոցառումից առաջ 4 օր:
- Նախագծե՛ք և կառուցե՛ք այնպիսի տաղավար, որը կլինի գրավիչ և այցելուները կցանկանան երկար ժամանակ անցկացնել ձեզ մոտ, նախատեսե՛ք ինտերակտիվ զբաղմունքներ, հյուրասիրություն, հուշանվերներ և այլն:
- Ներկայացե՛ք առանձնակի ուշադրություն դարձնելով թիմի արտաքին տեսքին՝ հագուստ, համազգեստ, բրենդավորված դետալներ և այլն:

Կառուցապատման կանոնակարգը՝

- Խնդրում ենք տաղավարի էսքիզի՝ ձեր կողմից հաստատված վերջնական տարբերակն ուղարկել մեր հաստատմանը ոչ ուշ քան կառուցապատումը սկսելուց 1 ամիս առաջ:
- Մեր ընկերությունից կառուցապատումը պատվիրելու հարցման պարագայում մանրամասները և պայմանները կքննարկվեն և կտրամադրվեն դեպք առ դեպք՝ անհատական պայմաններով:

Լրացուցիչ նշենք, որ

- Թռուցիկների, այցեքարտերի բաժանում, պրոմոակցիաների ներկայացում, նվերներ այցելուներին և կազմակերպության վերաբերյալ ինֆորմացիոն նյութերի փոխանցում իրականացնել միայն ձեր տաղավարից՝ բացառությամբ նախնական պայմանավորվածության նմանատիպ հավելյալ ծառայության ամրագրման դեպքերի:
- Դուք իրավասու եք օգտագործել պայմանագրով ձեզ տրամադրված տարածքը ձեր հայեցողությամբ: Տվյալ տարածքից դուրս ցանկացած գործունեության իրականացում, հավելյալ ստենդի, գովազդային վահանակների տեղադրումը ենթադրելու է հավելավճար:
- Ձեր կողմից ամրագրված տաղավարում մեկից ավել կազմակերպություն/ բրենդ ներկայացնելու մտադրության պարագայում նախապես տեղեկացնել մեզ՝ միջոցառման կազմակերպչի ձեր կոնտակտային անձին, հաստատում ստանալու համար, հակառակ պարագայում նմանատիպ տաղավարը չի կարողանա անցնել հաստատման փուլը:
- Ցուցահանդեսի աշխատանքային ժամերին բոլոր տաղավարները պետք է լինեն ներկայանալի վիճակում, բացվեն և փակվեն միջոցառման աշխատանքային ժամերին: Պարտադիր է աշխատակիցների մշտական ներկայությունը տաղավարում:

ՍԻՐՈՎ ԿՍՊԱՍԵՆՔ ՁԵԶ ՄԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԵՎ ԿԱՋԱԿՑԵՆՔ ՄԵԶՆԻՑ ԿԱԽՅԱԼ ՑԱՆԿԱՑԱԾ ՀԱՐՑՈՒՄ ՁԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հարցերի դեպքում դիմե՛ք մեզ՝

19/1 Սայաթ-Նովա, Երևան 0001, Հայաստան
+374 41 301399
e-logifest@eventexpo.group
eventexpo.group
elogifest.com